

ՔԱՂԱՔԱԿԱՆՔ.

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

ՎԱՍՆ ՄԵՆԱՍՏԱՆԱՅՆ ՀՌՈՎԱԿԱՆ ԿԱԹՈՒԿԱՅ ՈՐ Ի ԹԱԳԱՌՈՐՈՒԹԵԱՆ ԼԵՆԱՍՏԱՆԻ.

Ռուսաստանի քաղաքական բարեկարգութեանցը մէջ, որ եղան 1864 տարւոյն ետքերը, նշանաւորներէն մէկն է Լեհաստանի վանքերէն շատին փակուիլը կամ վերցուիլը: Այս կարգադրութեան պարագաները լաւ հասկըցուելու համար՝ այս տեղ ձիշդ թարգմանութեամբ ղեկմբ Կայսերական Հրովարտակը.

« 20դոտափառ նախորդացն Մերոց պաշտանելով զուխտ կտակի, եւ զհետ երթալով անկեղծ զգացմանց Մերումս սրտի, ցանգ պաշտպան կացեալ է Մեր օրինական իրաւանց եւ անվթար պաշտանութեան դաւանութեանց հաւատարիմ հպատակացն մերոց. եւ յայսմ մասին առաջնորդ կալեալ է Մեր հանապազ զայն սկզբունս կրօնաներդութեան, որ մին է ի հիմնական գլխոց հայրենականացս մերոց օրինադրութեանց, եւ որ անընդհատ զօգիւ միաւորի ընդ նախնի պատմական աւանդութեանց ուղղափառ եկեղեցւոյ ազգիս Ռուսաց:

« Եւ ի թագաւորութեան Լեհաստանի, որոյ բնակիչքն մեծաւ մասամբ ունին զգաւանութիւն հռովմէական կաթոլիկ եկեղեցւոյ, առանձինն իմն խնամ կալեալ է Մեր բարեկարգութեան եկեղեցւոյն այնորիկ, պաշտպանելով զբովանդակ կարգադրութիւնս նորին այնպէս՝ որպէս անգստին իսկզբանէ հաստատեալք իցեն: Յաման 1861 եւ 1862, յորժամ պարգեւեցաքն բնակչաց այնր թագաւորութեան պէսպէս ազատութիւնս եւ արտօնութիւնս, ընդարձակեցաք զնոսին եւ առ եկեղեցական հռովմէական կաթոլիկ եկեղեցւոյ, յանձն առնելով զվերատեսչութիւն գործոց նորին արանց՝ որոց հաւատարմութեան առ հռովմէական կաթոլիկն եկեղեցի անյերկուանալի էր:

« Որոյ վասն եւ առաւելագոյն ցաւով սրտի նկատեալ տեսաք Մեք, զի ի ժամանակի վրդովմանցն յետ այնորիկ յուզելոց ի թագաւորութեան Լեհաստանի, ոմանք յեկեղեցականացն հռովմէական կաթոլիկաց անհաւատարիմք երեւցան եւ հովուականին իւրեանց պաշտաման եւ պարտուց հպատակութեան: Նոքին իսկ կրօնաւորքն՝ ի մոռացոնս դարձուցեալ զպատուէրս Աւետարանին, եւ զկրօնաւորական ուխտան զորս ուխտեալ էին առաջի սրբոյ սեղանոյն, յարիւնհեղութիւն զմարդիկ գրգռեցին եւ ի սպանութիւն, պղծեցին զորմունս մենաստանաց՝ ընդունելով ի նոսին զսեղանակապուտ երգմունս յաղագս ոճրագործութիւնս առնելոյ. ոմանք անձամբ իսկ դիմեալ խառնեցան ի դասս խռովարարացն, եւ թաթաւեցին զձեռս իւրեանց յանպարտ արիւն անմեղաց:

« Թէպէտեւ մեծապէս վշտացուցիչք են Մերումս սրտի երեւոյթքս այսոքիկ, որք գրգռուցուցանեն ի հիմանց զհաւատս եւ զուղղութիւն բարուց ժողովրդոցն յանձնելոց ի վերնախնամ Տեսչութեանէն Մերումս առաջնորդութեան, սակայն չզօրեն նոքին ցրտացուցանել զեռանդն հոգատարութեան Մերոյ ի բարեկարգութիւն հռովմէական կաթոլիկ եկեղեցւոյ ի թագաւորութեան Լեհաստանի: Այսու մասք պատուէր տուաք Մեք Կանոնադիր ժողովոյն՝ կազմել եւ առաջի առնել մեզ զցուցակս հասից եւ զկալուածոց, որովք անքոյթ եւ անկարօտ լինիցի նիւթականն դրութիւն հռովմէական կաթոլիկ եկեղեցականաց, այնպէս զի մարթ իցէ ոչ միայն հաւասարել ըստ կարի զարդիւնս զորս անդամք նորին շահիցին ի թոշակացն եկեղեցականաց, այլ եւ առանձինն գիւրգիւթիւն լինիցի կենաց այնոցիկ ի ժողովրդապետաց՝ որք զարդիս, առ անհնարին սակաւութեան

կամ անստուգութեան հասիցն՝ կարի իմն նեղին չքաւորութեամբ:

«Բայց միանգամայն եւ փորձն դշխեմ՝ անցելոցն աւուրց բուռն առնէ Մեզ զգուշանալ ժողովրդոց՝ զի մի նոյն պատահարք վերստին գայցեն ի ցուցակութիւն, ըստ օրինակի այնց որովք կրօնաւորական միաբանութիւնք ի թագաւորութեանն Լեհաստանի յայտ արարին զկցորդութիւն իւրեանց ի յոյզս խռովութեանն: Հաւաստեալ ի վերայ հասաք, զի անմարի է թողուլ զմենաստանս թագաւորութեանն յայնմ անյարիր վիճակի, յոր մինչեւ ցայժմ վայելէին նոքա առանձինն ներդամութեամբ Պետութեանս, մինչդեռ ի յոլովս ի հռովմէական կաթողիկ թագաւորութեանց եւրոպայ՝ կրօնաւորքն վաղու եւս արկեալ են ընդ իշխանութեամբ վիճակաւոր եպիսկոպոսաց՝ ի դատարկել զմենաստանս յորս ոչ եւս գուցէ սահմանեալն ի կանոնաց թիւ կրօնաւորաց, կամ թէ որք վնասակար ցուցանիցեն գնացս, եւ ի տալ ի տեսչութիւն արքունի զստացուածս մենաստանաց. որոց եթէ եկեղեցականքն կամիցին լինել մատակարարք, ի բաց խոտորին ի կատարմանէ պարտուց բնիկ կոչմանն իւրեանց: Տեսեալ զի եւ ի թագաւորութեան Լեհաստանի կարեւոր պիտոյ է կարգադրութիւնս այս ի նորոգութիւն խանդարեալ բարեկարգութեան հռովմէական կաթողիկ եկեղեցեաց, հրամայեցաք սահմանել ի Վարշաւա առանձինն ժողով կազմեալ յարանց ընտրելոց՝ է զի ի Մէնջ, եւ է զի ի Փոխարքայէն մերմէ: Այն յանձնաժողով ուշի ուշով ի քնին էառ զայս խնդիր՝ եթէ ոչ քովմանք ի մենաստանաց յականէ յանուանէ արժանիք դատիցին դատարկանալոյ ի պատճառս սակաւութեան թուոյ կրօնաւորելոցն ի նոսա, միանգամայն եւ հետազօտեաց եթէ ոչ քովմանք յառանձինն մենաստանաց կցորդք եղեն գործոց վերջնումն այսմիկ խռովութեան:

«Յակն արկեալ զտեղեկագիր յանձնաժողովոյն, զոր առաջի արար Մեզ Փոխարքայն Մեր, եւ լուեալ զմիակամ վճռադատութիւն նորին, սահմանեցաք եւ սահմանեմք:

«Յօդուած 1. Մենաստանք կամ Վանորայք արանց եւ կանանց հռովմէական կաթողիկաց ի թագաւորութեան Լեհաստանի, յորս ոչ կայցէ սահմանեալն ի կանոնաց թիւ միանձանց եւ միանձնուհեաց, եւ յանուանէ այնորիկ՝ յորս թիւ կրօնաւորելոցն նուազ իցէ քան զ8 անձինս, անյապաղ պարտին դատարկանալ, իբր զի չկարեն ըստ օրինի պահպանել եւ յառաջ վարել զկրօնաւորականն բարեկարգութիւն:

«Յօդուած 2. Բաց յայսմանէ պարտին անյապաղ դատարկանալ այնորիկ ի մենաստանաց հռովմէական կաթողիկաց ի թագաւորութեան Լեհաստանի, որք յայտնապէս եւ հաւաստեալ կցորդք եղեն խռովութեանցն վերջնոց յուզելոց անգանօր հակառակ Պետութեանս:

«Յօդուած 3. Թէ որպէս սահմանիցի ճշգրիտ թիւ համարոյ կրօնաւորաց անձնիւր մենաստանաց նշանակելոց յառաջնումն յօդուածի, եւ թէ որք իցեն դէպքն յորս մենաստանք ըստ զօրութեան երկրորդի յօդուածոյն փակելիք իցեն, առ այս առանձինն յաւելուածովք դնին ընդ հրովարտակիս կանոնադրութիւնք:

«Յօդուած 4. Միանձանց այնոցիկ ի մենաստանաց հռովմէական կաթողիկաց, որք ըստ բանից այսր հրովարտակի պարտին դատարկանալ եւ կամ փակիլ, հրաման տուեալ ինի յառաջ վարել զկրօնաւորական կեանս իւրեանց յայլս ի մենաստանաց թագաւորութեան Լեհաստանի. որոց եւ սահմանեցի առ այս յարքունուստ յաւելուած ոռնկի կամ թոշակաց, կամ թէ գնալ արտաքոյ սահմանաց Պետութեանս՝ առ ի կեալ անգանօր մշտնջենաւորապէս, ընդունելով յարքունուստ նպաստ ճանապարհի եւ թոշակ տարեւորական:

«Յօդուած 5. Յազատութեանց նշանակելոց ի 4 յօդուածի զրկեսցին այնք ի կրօնաւորաց որք յանցաւորք ցուցանիցին յոճրագործութիւնս եւ ի խռովարարութիւնս. եւ ընդ նոսա վարեսցի Պետութիւնս որպէս օրէն է ըստ սահմանեալն կարգի:

«Յօդուած 6. Նորընծայից եւ այլոց վանականաց մենաստանացն դատարկելոց, որք չեւ եւս ուխտեալ իցեն զուխտ կրօնաւորութեան, տուեալ լինի հրաման ելանել ի վանացն եւ ընտրել զայլ պայման կենաց: Իսկ եթէ ցանկանայցեն յառաջ վարել յայլում մենաստանի զնորընծայութիւն իւրեանց, բաշխին ի մենաստանս մնացեալս, բայց ոչ ընդունին ի սնունդ իւրեանց զառանձին թոշակ:

«Յօդուած 7. Ամենայն իշխանութեանց պատուէր տուեալ լինի առնել զամենայն հնարքս՝ զի մի դադարեսցէ աստուածպաշտութեանն կարգ յեկեղեցիս որ մերձ իցեն մենաստանացն դատարկելոց կամ փակելոց:

«Յօդուած 8. Եկեղեցիքն յիշատակեալք ի նախընթաց յօդուածի, յետ սկզբնական կարգադրութեան եւ յապահօրութեան նոցին, զօրութեամբ 16—22 կանոնաց յարելոց ի հրովարտակս յայս, անցանեն ընդ Տեսչութեամբ Վիճակաւոր Եպիսկոպոսաց:

«Յօդուած 9. Եկեղեցիք մենաստանաց դատարկելոց կամ փակելոց, որք յառաջագոյն եւս ունէին ժողովրդական ծուխս, կացցեն եւ մնացեն ժողովրդականք՝ յետ դատարկանալոյ կամ փակելոյ մենաստանացն:

«Յօդուած 10. Նախնական դպրոցք որ գտանին ի մենաստանս հռովմէական կաթողիկոց ի թագաւորութեան Լեհաստանի՝ պարտին մնալ հաստատունք յապաղայսն, եւ թողցին ի շինուածս անդ վանորէից: Եթէ յղկինսն պէտք ինչ լինիցին զմանս ի շինուածոցն յայնցանէ վարել յայլ ինչ պէտս, յայնժամ ի փոխարէն այնց շինուածոց սահմանեսցի յարքունուստ դպրոցացն այնոցիկ այլ ինչ շինուած բնակութեան:

«Յօդուած 11. Առհասարակ ամենայն նախնական դպրոցք անցանեն ընդ անընդմէջ տեսչութեամբ յանձնաժողովոյն ազգային լուսաւորութեան: Տեսչութիւն նախնական դպրոցացն այնոցիկ, դասախօսութիւնք ի նոսա եւ ընտրութիւն ուսուցչաց լինին ըստ ճշգրիտ բանից հրովարտակաց՝ որ յ50 օգոստոսի (11 սեպտեմբերի) տարւոյս, յազազս նախնական դպրոցաց եւ յազազս ուսումնական վերատեսչութեանց կարգելոց:

«Յօդուած 12. Եկեղեցական դպրոցք, որ գտանին մերձ առ Կոնստանտնուպոլիս կարգին

քարոզչաց ի Վարշաւ, ի Լիւպլին, ի Վլոցլաւ եւ ի Փլոցք, անցանեն ընդ լիակատար իշխանութեամբ վիճակային եպիսկոպոսաց:

«Յօդուած 13. Որպէս զի սերտ եւս միասցին դասատուութիւնք, եկեղեցական դպրոցք քարոզչացն պարտին միանալ ընդ վիճակային եկեղեցականաց դպրոցաց, համաձայնութեամբ տեսչութեան հոգեւորական գործոց ընդ վիճակային իշխանութեան: Ի միանալ այսպէս երկուց եկեղեցական դպրոցաց՝ սահմանի վասն նոցա տեղի ի միում ուրեք ի դատարկացեալ վանորէից՝ եթէ կարելոր թուեսցի. իսկ գումարք դրամոց նշանակեալք ի պահպանութիւն միումն կամ միւսում ի նոցանէ ոչ կարճեսցին:

«Յօդուած 14. Հիւանդանոցք, աղքատանոցք եւ այլ բարեգործական տեղիք որք էին ի վանորայսն դատարկեալս կամ փակեալս՝ անցանեն հանդերձ շինուածովք իւրեանց ըստ հասարակ օրինաց ընդ տեսչութեամբ յանձնաժողովոյն կարգելոյ ի Պետութենէն վասն ներքին եւ եկեղեցական գործոց: Ի սնունդ նոցա եւ ի դարման հատուցանին դրամք ի գանձարանէ թագաւորութեանն Լեհաստանի յեկամտից վանորէիցն առելոց յարքունիս:

«Յօդուած 15. Յետ դատարկանալոյ եւ փակելոյ վանորէից ըստ զօրութեան առաջին եւ երկրորդ յօդուածոց այսր հրովարտակի, այլ ամենայն հռովմէական կաթողիկ վանորայք՝ որք մնայցեն ի թագաւորութեան Լեհաստանի, թէ արանց իցեն եւ թէ կանանց, բաժանին ի սահմանաւորս եւ յանսահմանաւորս: Վերջինքն, այսինքն են անսահմանաւորք, դատարկացին հետ զհետէ, յորժամ թիւ կրօնաւորելոցն ի նոսա պակասիցէ, մինչեւ ի միում ուրեք ի մենաստանացն այնոցիկ մնայցեն միանձունք կամ միանձնուհիք պակաս թուով քան զ8:

«Յօդուած 16. Ամենայն մենաստանք թագաւորութեան Լեհաստանի, եւ սահմանաւորքն եւ անսահմանաւորք, արկանին ընդ իշխանութեամբ վիճակաւոր եպիսկոպոսաց, որով եւ ի բաց բառնի հպատակութիւն նոցա կրօնաւորական գաւառապետաց եւ ընդհանրական մեծաւորաց, եւ ոչ եւս հրաման է նոցա նամակագիր լինել առ նոսին. ընդ նը-

մին ի բաց բառին եւ վանական ժողովք: Մանրամասն կանոնք յազազս տեսչութեան վանորէից եւ յազազս այցելուաց ի զննութիւն բարեկարգութեան մենաստանաց՝ հրատարակեսցին առանձինն:

«Յօդուած 17. Յանձն լինի կազմել զառաջարկութիւն յազազս դրամոց զորս պարտ իցէ սահմանել ի չափաւոր սնունդ սահմանաւոր եւ անսահմանաւոր վանորէից. միանգամայն եւ կանոնս սահմանել, որովք քաղաքական տեսչութիւն պարտի հսկել ի վերայ ճշգրիտ պահպանութեան օրինաց Պետութեանն ի կողմանէ վանորէից: Առաջարկութիւնքն այնպիսի յետ վերադննութեան կանոնադիր ժողովոյն պարտին ընդունել զՄերս հաստատութիւն:

«Յօդուած 18. Առ ի դարձուցանելոյ զկրօնաւորս ի բնական պարապմունսնոցին, եւս եւ որպէս զի հաստատուն եւ զուգաչափ եղանակաւ պահպանեսցին հռովմէական կաթոլիկ մենաստանք թագաւորութեան Լեհաստանի, եւ ընուցուն պէսպէս պիտոյք եկեղեցեաց հռովմէական կաթոլիկաց, զօրութեամբ 21 յօդուածոյ հրովարտակիս այսորիկ, ամենայն անշարժ ստացուածք մենաստանաց արանց եւ կանանց՝ եթէ դատարկելոցն եւ փակելոց, եւ եթէ մնացելոցն սահմանաւորաց կամ անսահմանաւորաց, նոյն պէս եւ դրամագլուխք նոցին, անցանեն ընդ տեսչութեամբ գանձուն արքունի՝ ըստ զօրութեան նոյնօրինակ կարգադրութեանց եղելոց յամսն 1818—22:

«Յօդուած 19. Վերոյիշեալ ստացուածք ամենայն աւանդին ըստ կանոնաց եղելոց ընդ հրովարտակիս ընդ այսմիկ, ընդ լիակատար իշխանութեամբ յանձնաժողովոյն հասից եւ ծախուց Պետութեան, ի բաց առեալ միայն զշինուածսն որք մնասցեն մենաստանաց եւ վանական եկեղեցեաց, որք փոխեսցին ի ժողովրդականս կամ յերկրորդականս, եւս եւ զայնպիսիս (չտունս, զշինուածս, զկալուածս եւ այլն) որք ի սնունդ

հիւանդանոցաց եւ աղքատանոցաց եւ այլոց աստուածահաճոյ եւ կենցաղօգուտ նպատակաց, սորա պարտին մնալ ընդ իշխանութեամբ Յանձնաժողովոյն ներքին եւ եկեղեցական գործոց, եւ կամ անցանել ընդ իշխանութեամբ Յանձնաժողովոյ աղգային լուսաւորութեան:

«Յօդուած 21. Եկամուտք կալուածոց վանորէից, որք այժմ անցանեն ընդ իշխանութեամբ Յանձնաժողովոյն հասից եւ ծախուց, յետ զեղչելոյ ոչ աւելի քան 40 առ % շահ անտի իծախս կարեւորս մատակարարութեան եւ տեսչութեան կալուածոցն այլնոցիկ, թէպէտ եւ մտանեն ի գանձարան թագաւորութեանն, սակայն միայն յառաջիկայ պէտս կարեն ի գործ արկանիլ. ա) ի սնունդ եւ ի պահպանութիւն մենաստանացն մնացելոց, ըստ զօրութեան 17 յօդուածոյն. բ) ի հատուցումն թոշակաց եւ ճանապարհական նպաստից միանձանցն եւ միանձնուհեաց դատարկացեալ վանօրէից. գ) ի պահպանութիւն կանոնաւոր եւ անընդհատ կարգաց աստուածալաշտութեան յեկեղեցիս մենաստանացն այնոցիկ. դ) ի պահպանութիւն ամենայն ուսումնական եւ բարեգործական տեղեաց՝ որք էին ի նոսա. ե) ի նպաստ չքաւոր եկեղեցականաց՝ որք նշանաւոր լեալ իցեն հաւատարմութեամբն իւրեանց ի սպասու եկեղեցւոյն եւ Պետութեան, եւ առ հասարակ ի դիւրութիւն վիճակի հռովմէական կաթոլիկ եկեղեցականաց. եւ զ) ի պահպանութիւն եւ ի յառաջագլուխութիւն աղգային կրթութեան, մանաւանդ նախնական գրպրոցաց:

«Յօդուած 22. Հրովարտակիս այս հանդերձ յարագրելովքն առ սմին կանոնօք պարտի անյապաղ անցանել յՕրագրութիւն Օրինաց:

«Տուաւ ի Յարսքոյէ-Սելօ, ի 27 հոկտեմբերի (յ8 նոյեմբերի) 1864 ամի:

(ստորագրեալ)

ԱՂԵՔՍԱՆԴԻՐ. »

